# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հոկտեմբերի 2023 թվականի № 323-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 4 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հունիսի 07-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* N 182-Ա որոշման N 2 հավելվածի 13-րդ կետում ***«Անուշ Առաքելյան»*** բառերը փոխարինել ***«Սուսաննա Գրիգորյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Գետարգելի հիմնական դպրոց», «Պտղնիի միջնակարգ դպրոց» և «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

**2023 թվականի հոկտեմբերի 27**
**ք. Հրազդան**